

Թիւն լինի, և զինքն կախարդած գիտենայ
կամ զեղած և ոչ բժշկի հաւատայ և ոչ զեղի,
և այնք գիտենայ թէ կամ վաղն մեռանի կամ
երիկունն, և նեղի և տապի, և ձգեռտուկն
զայ ժամ մի թթու և ժամ մի հոտած և
ձկնահամ. և ժամ մի հանց գիտենայ թէ
արեւահամ ընդ բերանն 'ի դուրս է 'ի
գալ. . . : Իւ բժշկապետներն զայս ցաւոյս տե-
րն Ստամբուլսանկար կոչեն, և երբ այդ
ցաւո 'ի լոյս ելանէ, մարդոյն քուն վատ գայ,
և ոտս ընդ ոտս գայ 'ի քանն. և երբ լինի 'ի
քունն իւր հանց թփնայ թէ 'ի մութն տեղ
եմ, և այլ թփի թէ 'ի բարձր տեղաց 'ի վայր
է անկանել, և կամ 'ի ծովու մէջ կայ և կամ
'ի նեղ տեղ կայ: Եւ ասացեալ է Ռուբաս թէ
մարդ մի կայր որ զինքն 'ի տանէն 'ի դուրս
չկարէին հանել. և երբ ասկին թէ ել 'ի տա-
նէս, նա ասէր թէ ինչ ցեղ ելնեմ, երբ երկին-
քն 'ի վրաս է փրել և զիս 'ի ներքե է յար-
գելել. . . : Զի յառաջին ժամանակին մարդ
մի եղեալ է այս ցաւոյս տէր, և ասէին թժշ-

կապետներն թէ նշանք տուր քո ցաւոյս, նա
խօսէր ոչ. երբ ողջացուցին՝ հարցին թէ յէր
չէր խօսել, նա ասաց թէ ինչ ցեղ խօսէի երբ
լեզուս ապիկի էր, թէ խօսելի կոտրէր: Եւ
մարդ մի այլ կայր յիմ ժամանակն և կարծէր
թէ անգլուխ եմ, բայց բժշկապետներն ճարտար
էին, յարձնէ սաղաւարտ զուգեցին 'ի գլու-
խին եղին, և երբ 'ի գլուխն ծանդրացաւ ապա
գիտաց թէ գլուխ ունիմ. . . »:

Ուրիշ նման օրինակներ դեռ կը տեսնենք
յրնթացս պատմութեանս, թերեւ քան զայս
գեղեցիկ և աւելի յարգարուն:

Գալով դեղոց, բուսոց և հիւանդութեանց
անուններուն՝ մեծաւ մասամբ արարացի բա-
ռերն կը գործածեն մեր բժշկարանք. երբեմն
և մարդակազմութեան բառերն ալ յորս կը
սպակի հայերէնն:

Իր շարունակութիւն:

Հ. ԱՐՄԵՆ ՍՈՒՐԵՆԱՆ

ԱՆԴՐԷԱՍ ՎԱՐԺԱՊԵՏ

✱ Հանգոցեալ 'ի Սիմֆերոպոլ Տաւրիոյ, 1856 Մարտ 13.

Հայաստանու ցրուեալ որդիւր՝ թէ-
պէտ և օտար 'ի հայրենի օփանց, հե-
ռաւոր աստեղաց ներքե ծնանին և
մեռնին, սակայն միշտ իրենց դարերով
կոկուած միտքն և ազնուայած զգա-
ցմունքն հետեւին անբաժան ունին.
չեն կրցած ոչ Պարսից, ոչ Արաբացւոց
և ոչ Բրդաց սուրբ և երկաթն բխա-
ցընել Հայոցն կիրթ միտքը և բրտա-
ցընել ազնուական զգացմունքներն:

Հանճար՝ որ ճաճան մ'է երկնա-
ռաք, որ եթէ իջնայ մէկու մը վրայ,
կը բեղմնաւորէ անոր միտքն և գեղե-
ցիկ և շահեկան արգասիք կը բոխն
անտի, սակայն սոյն այս երկնաւոր ճա-
ճանը կ'ուզէ իրեն պատրաստուած և
մաքուր տեղ կամ ենթակայ, որոց
վրայ խաղայ կամ իջնայ. ինչպէս շա-
հեկան մայիս ամսոյ անձրեր մաքուր և
պատրաստ դաշտավայրին վրայ, ո-
րոյ ծոցն սերմանիք արդէն յայնան
ձգուած են: Պարսիկներն և Բրդերն և
այլ շատ ասիացի ժողովուրդք, զեռ տա

անկարող են գեղեցիկ դպրութեանց և
արուեստից ճաշակն առնուլ և արդիւ-
նաւորել, այլ Հայն, ըստ խորնոյ ծե-
րունւոյն, քան զամենայն արեւելայս
դերագոյն, հաւասար Եւրոպացւոց ընդ-
ունակ է հանճարոյն ներշնչանց.
վկայ են խօսքերուս, ինչպէս գեղեցիկ
դպրութեանց, նոյնպէս և գեղարուես-
տից մէջ երևելի եղած Հայերը: Հաւա-
նական է կարծելը որ շատերն ալ ան-
յաղթելի պարագաներէ շրջապատեալ,
աստուածատուր հանճարնին 'ի խան-
ձարոց 'ի գերեզման տարած են՝ ան-
ժանօթ մնալով ապագային՝ նոյն և ժա-
մանակէից, թերեւ և անձանց իսկ:
Դիտելու արժանի կէտ մ'է, որ ցայս
օր լուած չէ հայ երգահանի մը շա-
րագրութիւն՝ եւրոպական նշանադրոյ-
միւք (note), որ նշանակութիւն ունենայ
Եւրոպայի դիմաց, թէպէտ և չենք տա-
րակուսիր, որ հին Հայաստան ունեցած
ըլլայ իւր հայ երգահաններն, որք եր-
գած են զփառս հայրենի աշխարհին և

որդացած նորա անդրութեան վրայ, որոց անուանք և գործք ջնջած է ամենածախ ժամանակը: Ներկայիւս կ'ուզենք հայ երգահանի մը յիշատակը կենդանացընել ազգիս մեծամասնութեան առջև. զի տղիս փոքր մասին կամ հատուածի մը համար, այն է Ղրիմեցոց, ցարդ կենդանի է Անդրէաս վարժապետ իւր գեղեցիկ երկասիրութիւններով, թէպէտ և ինքն Անդրէ՝ 25 տարի է որ մեռած է:

Վարժապետիս վրայ խօսիլ սկսելէն առաջ, կարևոր կը համարիմ ծանուցանել. որովհետև Անդրէ, աշխարհիս այն պիտի մէկ անկիւնը ծնած և մեծցած է, որ ինչպէս ինքն՝ նոյն և ծննդեան տեղը ազգիս մեծ մասին անծանօթ են, այն պատճառաւ շատ մը նորանոր պարտադանքուս և սովորութեանց վրայ խօսել կը հարկաւորինք. որ թէպէտ զլիսաւոր նպատակէն դուրս ևս երևան, այլ անմիջապէս կարևոր են, Անդրէ՝ ով և ինչպիսի անձն ըլլալը հասկընալու համար:

Նախ այս կարևոր է դիտնալ, որ Անդրէաս թէպէտ և բնածին հանճար է, սակայն զուրկ մնացած է բոլորովին դաստիարակ կրթութենէ, նոյն իսկ իւր արուեստի մասին, այն է երաժշտութեան. դարձեալ այն տեսակ հանճարներէն չէ՝ որ ամեն արգելք, խոչը և խուժք մէկդի թաւալելով սրբնթաց գետի նման առաջ անցնի. այլ նա կը նմանի մանաւանդ մեղմնթաց քաղցրաշուր վտակի, որ լիւններէն կարկաշելով, արգելից տեղի տալով, կամ քովերէն քերելով անցնելով՝ հասած է իրեն վախճանին: Արգելից դէմ յայտնապէս չի պատերազմիր նա, սակայն անփոյթ չի կենար. անխօն կ'աշխատի անձին կրթութեան վրայ, հմտանալու՝ դիտնալու համար, որով շատ արգելք ինքնին կ'անկանին և ճամբայ կը բանան նոցա զիմաց դէպ՝ յառաջադիմութիւն:

Անդրէաս ծնած է Տաւրիոյ խորասու. քաղաքին մէջ՝ ի 1809 մարտի 7, յԱստուածատուր և յԱննա բարեպաշտ

ծնողաց: Խորասու¹ Ղրիմու կեդրոնական քաղաքն ըլլալով, այն ժամանակ շատ ծաղկած է եղեր առևտուրի մասին: Աստուածատուր նոյն քաղաքին պատուաւոր քաղաքացիներէն մէկն համարուած, 36 տարի ժողովրդական պաշտօններու մէջ ծառայելով, Հայոց դատարանին մէջ դատաւոր, եկեղեցւոյ երէցիփաճն և աղքատաց գանձահակին գանձապետ էր: Իրը Անդրէաս ուլթ տարեկան կ'ըլլայ, ծնողքը կը զրկեն զնա դպրոց, Ս. Լուսաւորիչ Նիկեղեցւոյ բակին մէջ. Անդրէաս՝ թէպէտ փոքր՝ այլ մտացի աղայ ըլլալով, կանոնաւորեալ կերպով կ'եսորէն առաջ և ետև միշտ ժամանակին կ'երթայ վարժատուն և քիչ միջոյի մէջ կ'աւարտէ դպրոցին տարրական ուսմանց ընթացքը, չափաւորապէս սորվելով հայ և ռուս լեզուներն: Արդեանշատ չ՝ Մինաս Բժշկեան վարդապետը տեսնալով փոքրիկն Անդրէի ուսմանց յարմարութիւնը, քովը կ'առնու զնա, և ապա կ'առաջարկէ ծնողաց որ զրկեն զնա ի վենետիկ, Ալեքսան Այվազովսքի² և Գալրիէլ Գարամիլապեան խորասուցի տղոց հետ՝ Մխիթարեանց վանքը. ծնողք չեն յօժարիր հեռացընել աչքերնէն իրենց ծերութեան որդին, մանաւանդ որ՝ Անդրէ միշտ տկար եղած էր մարմնով:

Կ'երթան Անդրէի երկու դասակիցը ի վենետիկ, կը կոտրի նորա սիրտը՝ քանի որ կը մտածէ որ նորա հօն շատ բան պիտի սորվին և ինքը տգէտ պիտի մնայ Խորասուի մէջ. և որպէս զի դարման մ'ընէ ատոր, բոլորովին ինքզինքը կարգալ գրելու կու տայ, Մխիթար Աբբահօր բառգիրքը ծայր ի ծայր կը քաղէ, Զամէան փերականութիւնը

¹ Այժմ՝ շատ ինկած. Սիմֆերոպոլ նախանձորք Ենաւով երկաթուղիով յափշտակած է Խորասուի շահեկանութիւնը:

² Ալեքսան Այվազովսքի, վերջերս Գաբրիէլ Աբգէպիսկոպոս Նայոց կովկասու. վանքաճաղ ի 1880 ի Տփլիսի Դարբիէլ Գարամիլապեան, վերջերս Շ. Յովսէփ Վարդապետ առաջնորդ համբնէ կաթողիկոսայ Տաւրիոյ:

ի բերան կը սորվի, կը սկսին ծնողք զղջալ զԱնդրէ վենետիկ չորկենուն վրայ, սրտամաշ կ'երերայ մայրը, — « Ի՞նչ պիտի ըլլայ, կ'ըսէ, այս տղուն վերջը. կարդալէն ինչ օգուտ, ամենեկին առուտուրի գլուխ չունի »: Առ հասարակ խորատուցուց համար կարդալ ու գրելը աւելորդ կամ վարդապետաց միայն հարկաւոր համարուած էր այն ատեն. իսկ աշխարհականը մեծ Սաղմոսը կարդալէն ետեւ, պէտք էր որ գրեցրը մէկգի գրած առուտորով կամ ապրուստ մը ճարելու արուեստով պարապի: Այս համոզման տէր ըլլալով Անդրէի ծնողքն, բոլոր ջանքերն ինքն փած են, որ պաղեցընեն Անդրէի ուսումնասէր ակործակը. շատ անգամ գիշերը ճրագը անցուցած են որ երթայ պառկի. մէկ անգամէն աւելի յանդիմանութիւն լսած էր որ կարդալը և գրելը մէկգի ղենէ, հարկաւոր դործով պարապի. այլ նա յամառ միտքը գրած որ վենետիկ գնացող դասակիցներէն յետ չմնայ, միակերպ կարդալ գրելու ետեւէ էր: Այնպիսի կը սորվի գորառ, որ կոկիկ և գեղեցիկ ու ծով կը սկսի գրել. ուսուցիչն ի մէջ այն չափ առաւ կ'երթայ, որ կը սկսի դաստիարակութիւններն ընել: Այս միջոցիս Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ կաթողիկէին մէջ նկարելու համար պատկերահան մը կու գայ ի խորատու. Անդրէաս դասերէ ազատ միջոցներն կ'երթայ նկարչին մօտ ուշագործեամբ կը դիտեն երկ պատրաստելը և նկարելը, և քանի մ'անգամ փորձելէն ետեւ, ինքն ևս կը սկսի նկարել. ազգականացը շատին տունները կան ցայսօր նորա քաջած պատկերներէն, նոյնպէս Ղրիմու ազգային եկեղեցեաց մէջ. պատկերաց նիւթերը միշտ հոգեւոր են, Ս. Կոյս Աստուածամայր, Ս. Հայր Յովսէփ, և այլն, երբեք աչք մ'Անդրէի նկարած պատկերաց վրայ նայելով ոչ չափի կամ համեմատութեան պակասութիւնը կը գտնայ, որ յայտնի նշանք են անհանձար զրչի, այլ երանգոց և գունոց պակասութիւն, որ կրթութեան և

արուեստին մէջ անհմուտ ըլլալը կը յայտնեն:

Նկարչութեան հետ միանգամայն երաժշտութեան վրայ ևս սէր կը ձգէ, տառնց անշուշտ գուշակելու, որ օր մ'իրեն առատ ապրուստ պիտի ճարէ այդ գեղեցիկ արուեստը:

Խորատուի հայ բնակչոյ մեծ մասն առուտուրի և միւս մեծ մասն ևս խաշնագործմանութեան կը պարապին եղբր այն ժամանակ, այլ ոչ ինքեանք անձամբ, այլ թաթար հովուաց ձեռքով. որոյ որ ոչխարը շատ կ'ըլլար նա էր անուանի աղայն մէջերին. Ղրիմու և Ղրիմէն դուրս Օղը Խորի անձայր դաշտաց վրայ հազարաւոր և բիւրաւոր մեր Հայոց ոչխարը կ'արածէին այն ատեններն. այժմ խիստ քիչուոր են մեր երկրագործ խաշնագործման ազգայինը, և նոցա փոխանակած են տոկուն և աշխատասէր Գերմանացիք և մեծապէս հարստացած: Քաղցածեան Աստուածատուր աղայն ևս այդ խաշնագործմանց մէկն էր. երբ հովիւը նորածին գառնուկներով զրոյց կը բերէին աղային՝ հօտին վիճակին վրայ և փող, և ամառ գիշերներն խորատու գետին եղբրը չարուած իրենց հովուական սըրինգներն կը հնչեցընէին, խառն ընդ բնութեան և սիրոյ մեղեդեաց, Պահչէ-Սարայի (վերջին թագաւորանիստ քաղաք թաթար խաներուն) գեղեցկութիւնը, ազբերաց անապակ ջրերն, խաներուն անցեալ փառաց մեծութիւնը և փայլը, և թաթարաց անպարտի քաջագործութիւնը, Անդրէի ոգին կը վառուէր, կ'առնուր թաթար հովուաց բերնէն սրինգն, ինքն ևս կը հնչեցընէր: Թաթար հովիւը կը զարմանան կը մնան, երբ կը տեսնան որ իրենց երկար ժամանակով, և աշխատութեամբ սորված եղանակներն՝ Անդրէաս մէկ փշելով իրենցմէ գեղեցիկ և ակործակուր կը հնչեցընէ:

Անդրէ ժամանակ մը այս գործւոյ վրայ վարժութիւն ընելէն յետոյ, կը տեսնայ՝ որ այդ պիտութեան ծայրն հասած է, կը փնտռէ՝ կը գտնայ ջախ

ջախ սրինգ (flute) մի և քովէն փշելով՝ ճկուն մատերն կը տարուբերէ գործւոյն պղինձներուն և ծակերուն վրայ, ուշ կը դնէ՝ և կը տեսնայ որ թաթարաց եղանակներն շատ աւելի քաղցրալուր և ներդաշնակաւոր կ'եննեն սրնգին ծայրէն, քան հովուական սրնգին մէջն։ Առ ժամանակ մի կարդալն, գրելն և նկարչութիւն մէկ կողմ կը դնէ, մեծ ջանք կ'ընէ երաժշտական խաղի (note) արուեստն սորվելու։ ջախջախ սրինգը ձեռքն առած, ընտանի և սիրելի բնառութեամբ, առանց ամենեկին քաշուելու, կը սկսի յաճախել քաղաքին մէջ, խաղէ հասկըցող երաժշտաց տուններն։ Կը հարցնէ՝ կը տեղեկանայ արուեստին, և քիչ ժամանակի մէջ այնպիսի հարցմունքներ կ'ընէ վարժապետացն, որ չեն կրնար գոհացուցիչ պատասխաններ տալ։ Կ'իմանայ Անդրէ, որ հաւաքարած է գիտութեամբ իւր կարծեսցնալ վարժապետաց, այլ մարդու բան չի զրուցեր։ Այլ կ'իմանայ միանգամայն որ դեռ շատ բան կը պակսի իրեն՝ արուեստին տեղեկանալու հմտանալու։ Կ'աշխատի առանձին, ամբողջ գիշերներ խաղերը առջևը, սրինգը ձեռքը կը լուսացընէ։ Այլ աւաղ, շատ անգամ կը տեսնայ և կը համոզուի, որ ի դուրէն իր ջանքը, առաջնորդի և արհեստէն լաւ հասկըցողի մը պէտք կը զգայ, առ որ չգիտցածներն հարցնէ տեղեկանայ։ Այլ չկայ իրեն ծանօթ քաղաքին մէջ այդ առաջնորդը։ Կը կոտրի սիրտը, այլ չյուսահատիր։

Սոյն այս միջոցին խաբասուցի հայ երիտասարդաց ձեռքը փոշոնէկի խաղ մի կ'անցնի (1818)։ ամենքը գործինին առած մեծ ջանքով փորձ կը փորձեն, կ'աշխատին հանել այդ խաղը, այլ կը տեսնան որ իրենց գիտութիւնը բաւական չէ՝ այդ գիտութեան արուեստին համեմատ գրուած եղանակը հանելու։ Կ'որոշեն որ եթէ Անդրէաս ևս չկարենայ, այն ատեն լուռ և անեղանակ պիտի մնայ իրենց համար այդ խաղն։ Եր հասնի Անդրէաս, բոլորը մեծ ակնկալութեամբ իրեն կը դիմեն։ Կ'առնու խաղը

ձեռքը կը նայի՝ կը դիտէ։ Կը ցունս ևս ևս մեծամեծ աչքերը, կը կնճախ ճակատը, և քառորդ մի ժամու չափ, նախ մտքով և ապա սրնգին վրայ աշխատելէն ետև, իւր սակաւ գիտութեամբ, այլ սուր երևակայութեամբ կը քաշէ՝ կը հանէ անիմանալի եղանակը այլոց, և գեղեցիկ կը հնչեցնէ զփոշոնէկը սրնգին ծայրէն։ Մեծ կ'ըլլայ հասարակաց ուրախութիւնը և Պ. Անդրէաս կը կոչուի Անդրէաս վարժապետ։ Այլ նա ոչ միայն վարժապետ կ'ըլլայ երաժշտութեան, այլ նաև դասատու հայերէն և ռուսերէն լեզուաց։

Անդրէ երաժիշտ ծնած, սակայն կը տեսնայ որ խաբասուի մէջ միայն սրինգը փշելով ապրուստը չկրնար ճարել։ և որ պէսգիծնողպա բռն լըլլայ, յանձնկառնու դասեր տալու Ս. Լուսաուրիչ դպրոցին մէջ և այլ առանձնականաց տներն, և մնացեալ ժամանակն անխոնջ կը պարապի երաժշտութեան։ Անդրէի համեստ վարքն, հեզ վարմունքը և յերկտասարդութեան հեռի յաշխարհական ցնորից, խոհական և աշխատասէր կենսիքը, ոչ միայն ազգայնոց, այլ և օտարաց սիրելի և յարգելի ընծայեցին զինքը։ Բոլոր նշանաւոր քաղաքացւոց դռներն բաց են նորա դիմաց։

Պոպովիչ մականուամբ Գարայիմաց խախամ պաշըն (աւագ երէց) զԱնդրէ որդւոցը ռուս լեզուի դասատու կը կարգէ։ և ապա տեսնալով Անդրէի կանոնաւոր երթալ գալը, շնորհալի կերպը և անընդհատ աշխատութիւնը, շատ կը սիրէ զնա, և միտքը կը դնէ վարձատրել արժանաւոր կերպով։ Ժամանակ անցնելէն վերջը, օր մը Գարայիմը կը սկսի երաժշտութեան վրայ խօսք բանալ և քաջալերական կերպով խօսիլ ըստ քմաց Անդրէի։ Կը զուարթանայ վարժապետը, կը սկսի ճոխանալ արհեստին նրբութեան վրայ։ Խախամը քմիծաղով մը ակործիկ կը ձևացընէ, թէպէտ այնչափ կը հասկընայ երաժշտութեան նրբութեանէն՝ որչափ Անդրէ ձենաց լեզուէն։ Ետոյ կը զուրցէ Անդրէի որ ետեւէն գայ։ և սենեակ սենեկէ

անցնելով ընդարձակ պալատին մէջ (որ խարսառուի հարաւային կողմը բարձրաւանդակի վրայ կառուցած է, պարտէզներով շրջապատուած և շատ գեղեցիկ դիւրք ունի) նոր սենեկի մը դուռը կը բանայ, և հօն ցուցնելով Անդրէի նոր երաժշտական գործի մը, կը հարցընէ, թէ արդեօք կրնայ դարձնել այդ գործին։ Անդրէ ուշադրութեամբ գործուոյն ներսը և դուրսը դնելէն յետոյ, կ'անցնի, յառաջ և ճիւղն մատերը գործուոյն սև և ճերմակ ոսկերաց վրայ ածելով, գեղեցիկ եղանակներով կը հընչեցընէ գործին։ Կը հասկընայ Անդրէ որ զարկածը այն գործին է, զոր շատ ժամանակէ 'ի վեր կարդալով և լսելով տեղեկացեր էր և սաստիկ կը փափագէր տեսնալ։ աւելորդ է կարծեմ զուրցելը որ այդ գործին դաշնամուրն էր (Pianoforte), որ մինչև այն ատեն խարսուռի մէջ տեսնուած և լսուած չէր։ Քարայիմը Անդրէի զուարթութիւնը և չէնութիւնը պատկերով, կը նուիրէ իրեն այդ գործին։ Ո՛վ կրնայ պատմել վարժապետին ուրախութիւնը։ հաւանական է կարծելն, որ այդ քան զամեն օր երջանկագոյնն ըլլայ Անդրէի կենաց մէջ։

Անդրէի առաջին գործը կ'ըլլայ, այդ անակընկալ ընծայն ընդունելէն յետոյ, գործուոյն համեմատ խազեր բերել տալ ինքզինքը բոլորովին երաժշտութեան կուտայ։ օրուան մեծ մասը, նոյն և գիշերին, դաշնամուրին առջև կ'անցընէ։ ճարտար կերպով կը զարնէ գործին, տեսնողն և լսողը կը զմայլին հազար ու բիւր գովեստներ կուտան։ այլ վարժապետն ինքն իրմէ գոհ չէ։ որչափ որ զարգանայ արհեստին մէջ, այնչափ աւելի կը հասկնայ իւր տգիտութիւնը։ կ'իմանայ, կը զգայ որ երաժշտութիւնը մեծ ծով մ'է գիմացը բացուած, կ'ուզէ մտնալ նաւել մէջը, այլ կը տեսնայ որ իրեն առաջնորդ զեկալար մը կը պակսի։ Չկար մէկը՝ որոյ հարցնէր տարակոյսներն, կը պակասէր ճարտար ձեռք մը, որ գիմացը անգամ մը շարժէր գործուոյն վրայ

Ղրիմեցիք ասկէ 40 տարի առաջ, շատ կը յաճախէին 'ի Լեհա վաճառականութեամբ։ արդէն Անեյի գաղութականութեան մեծ մասն 'ի Լեհա բնականաւոր, հարստացած էին և ճոխացած իրենց ճարտարութեամբ, և յառետուրս աչքաբացութեամբ։ մեր Ղրիմեցուց 'ի Լեհա երթեկելութիւնը, կարելի է միջոց մը համարել իրենց եւրոպական ձևի և տարազու մտնալուն, թողլով թաթարաց կամ՝ առհասարակ արեւելիայց տարազը։ արտաքին ձևոց հետ կամաց կամաց ներքին, տնական ձևերն ալ կ'այլալլին։ երկայն երկայն բազմացաց և շարք շարք բարձից տեղ կը յաջորդեն ակոռներու և սեղաններու (սթոլ) գործածութիւնը։ պղնձէ ամաններ՝ տեղի կուտան ապակեայ և յախճապակեայ ափսէից և անօթոց։ կերակրելիսաց և խմորելիսաց մասին թէպէտ և հաստատ կը պահեն հին տեսակներն մինչև ցայսօր, սակայն և անոնց մէջն ևս մուտ կը գտնան Լեհի գաղաւն և էլորիայն։ երգոց և եղանակաց մէջ ևս կ'ըլլան փոփոխութիւնք։ Գրգռաց և Պարսից քթածայն և լաւական կերկերմանց՝ կը յաջորդեն Լեհացի երաժշտական խազով երգեցմունք։ Այս երգոց մասին մեծ արդիւնք ունի Անդրէաս վարժապետ, չէ թէ միայն շատ մը նոր եղանակներ մտցընելով 'ի Ղրիմ, այլ և հին մտածներն կանոնաւորելով և կոկելով, և երբեմն հայացընելով։ որովք չէ թէ խազով եղանակը կորսնցուցած չեն իրենց բնական գեղեցկութիւնը, այլ կանոնաւոր կերպով հայանալով՝ հաճոյ եղած են ազգային ականջաց։ Որչափ որ Անդրէաս վարժապետ արդիւնք ունի այդ եղանակաց վրայ, իւր բնածին հանճարովն, այլ եթէ ուրիշ զրազէտ մը ուշ դնէր թարգմանութեանց մասին, և գեղեցիկ ոճով հայացընէր, անշուշտ այդ գրիչը մեծ ծառայութիւն ըրած կ'ըլլար ազգիս մատենագրութեան, Լեհաց ճոխմատենագրութեան ճաշակը տալով հայոյն։ Այլ այդ երգոց թարգմանութիւնքը մեծաւ մասամբ անհմուտ

գրեաց տրտաղութիւնք են, շատ պաղ
և անհամ և լեզուիս կանոնաց դէմ լի
վրիպակաք, որով տակաւ անհետանա-
լու վրայ են, և եթէ ունիք մինչև ցայս-
օր մնացած են, միայն եղանակաց վա-
յելուչ ներդաշնակութեան համար է:

Յամին 1833 ի լեհայաճախող մեծ-
անուն Մուրատչայ աղայի Ս. Լուսա-
ւորիչ եկեղեցւոյն ձգած բաւական մեծ
գումարովը, բերել կու տան յիտալիոյ
փառաւոր երգեհոն մը. ժամանակին
խոհական և իմաստուն մեծաւորն, Վ.
Հ. Մինաս վարդապետ Բժշկեան, դէմ
չկեցաւ ժողովրդեան կամաց, անշուշտ
մոռանելով որ արդէն ի լեհո բնակող
համազգեաց եկեղեցեաց մէջ մտած է
երգեհոն գործածելու սովորութիւնը՝ ե-
կեղեցական պաշտամանց միջոց. և ին-
քըն որ հմուտ էր, միանգամայն սիրող
և յարգող ազգային արարողութեանց
և եղանակաց, Հայաստանեայց եկե-
ղեցւոյ ծննդայից և այլ մանր գործեաց
տեղ, պատշաճ համարեր է երգեհոնի
գործածութիւնը, որ շատ անգամ, մա-
նաւանդ քիչ տիրացուներ եղած տեղ,
ձայներու նուազութեան կը փոխանա-
կէ, և եկեղեցական երգեցումներ փա-
ռաւոր կ'ընծայէ:

Անշուշտ ընթերցողն չի տարակուսիր,
որ առաջին անգամ երգեհոնը հնչեցը-
նողը Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ կամա-
րաց ներքեւ, եղած է Անդրէաս վարժա-
պետը:

Ունի այժմ նա իր արուեստին երկու
ճարտարարուեստ գործիք երգեհոն և
դաշնամուր, կը զարնէ երկուքն ևս ի
զարմացումն և յափշտութիւն լսողայ-
այլ գիտէ վարժապետը որ իրեն մեծ
բան կը պակասի, չի խաբեր նա զինքն
ունիվորաց գովասանելով. լաւ կ'իմա-
նայ որ իրեն այդ գործեսցը տէր և
վարդապետն ըլլալով՝ գիտութիւն կը
պակսի: Շատ կերպ հնարքներ մտա-
ծելէն վերջը, միշտ գիշեր ցորեկ աշխա-
տելով, կամ ըստ Ղրիմեցւոց բացա-
տրութեան, խազի գրքերուն հետ ծե-
ծկուելով, օր մը կը համարձակի յայտ-
նել մտքն դրածը իր հոգևոր հօր Հ. Մի-

նաս վարդապետին (այս միջոցին մե-
ռած է նորա հայրը) թէ՛ կը փափաքի
ի լեհո ճանապարհորդել, ոչ վաճառա-
կանութեան համար, որ իրեն գործը
չէ, այլ ճարտար երաժիշտներ լսել, և
տեսնալու վախճանաւ Պիտեբու արժա-
նի է, որ մինչև այն ատեն Ղրիմեյի
ամենայն դիտութիւն, արուեստը և
լուսւորութիւն ի լեհաց կը սպասեն
ընդունել. վարդապետը չմերժեր նորա
փափագը, այլ մանաւանդ գովելով,
իւր յանձնարարական մէկ նամակովն,
կ'ուղարկէ զնա ի Պարտիչկով քաղաք
լեհաց, առ վաճառայրն Կարմեղակա-
նաց վանքին ի 1842: Երկու տարի կը
մնայ հոն միշտ ուշադիր իւր նպատա-
կին, սիրելի կ'ըլլայ վանահօր իր հեղ
և մարդամօտիկ վարմունքով, մեծ հա-
մակրութիւն կ'ունենան վրան Ռեկույ-
լքի և Մարոզովքի նշանաւոր երա-
ժիշտներն. նորա ամեն տարակոյսներն
կը լուծուին. չէ թէ մէկ՝ այլ շատ ան-
գամ կը դիտէ ճարտար նուագածուաց
մատերուն շարժումները. խազի գրոց
մէջ յովո մի կամ նշանախեց մի չի թո-
ղար, որոյ նշանակութիւնը լաւ չհաս-
կընայ. վասն զի վարժապետը միտքը
դրած է չէ թէ միայն հասկնալ խազերն
ու զարնել այլոց շարադրութիւնը ըս-
տըրկաբար, այլ ինքն ևս շարադրել և
գրել: Պայմանեալ ժամանակը լրանա-
լէն ետև, շատ երաժշտական խազեր,
յերեւելի վարժապետաց դրած, հետը
առած. գեղեցիկ աւար հանճարաւոր
մտքի. կը դառնայ ի հայրենիս, սիրտը
գոհ, նպատակին հասած:

Երախտագիտութեան հոգւով կը ծա-
ռայէ եկեղեցւոյն. աշակերտներ կը
ժողովէ, մեծ համբերութեամբ կը պա-
րագի սորվեցնելու. շատ եղանակներ
խազի կ'առնու. աշակերտաց համար
միակերպ խազեր կը գրէ. մեր եկեղե-
ցւոյ երգերէն ևս ոմանք խազի կը յար-
մարցնէ, որոց մէջ նշանաւոր է ծանր
Սուրբ Աստուած երգին եղանակը. քիչ
ժամանակի միջոց, մեծապէս կ'ար-
ծարծէ և կը տարածէ խաղասուի մէջ
երաժշտութեան եռանդը. քաղաքին

ազգային և օտար օրիորդք որ մինչև
յայն ժամանակ իրենց մասերը միայն
կար կարելու և գուրպայ հիւսելու կը
դորձածէին, վայելչապէս կ'ածին, շնոր
հիւ Անդրէաս վարժապետի, դաշն-
ամուրին ոսկերաց վրայ. շատ ևս երի-
տասարդք բարի նախանձով հետեւելով
Անդրէի օրինակին, արհեստիս վարժա-
պետքն եղած են մինչև ցայս օր¹. որով
ամենայն իրաւամբ՝ Անդրէ կրնայ հա-
մարուիլ նախահայր երաժշտութեան
բոլոր Տաւրիոյ քաջ երաժիշտ, ընտիր
նուագածու (tapeur), նուրբ բարոյ կամ
դաշնաւորող դաշնամուրից (accordeur),
վարժապետին դասերը շատնալով,
ունենոր և ընչեղ երիտասարդաց թիւը
կ'անցնի, ուստի ազգային տիկնայք չեն
ուզեր ձեռքէ հանել այնպիսի ազնիւ
փեսացուն, կը զիջանի Անդրէ առա-
ջարկութեանց և օրինաց բնութեան,
թէպէտ և ինքն բնութեամբ եղանա-
կաց և իդէայից աշխարհին մէջը պտը-
տի, կ'ընտրէ իրեն հարսնացու Քուշ-
ներեան Պօղոս աղայի Ռուժա² (վար-
դուհի) դուստրը. կը նշանուի հան-
ճարաւոր երգահանը, ազգիս նշանա-
ւոր և քաղցրաձայն երգչին և ջութա-

1 Մեծաւ մասամբ՝ Տաւրիոյ այլ և այլ
քաղաքացի մէջ, այս օրուան օրս, երաժշտու-
թեան վարժապետք կամ դասատուք խորասու-
ցի հայ երիտասարդք են, մինչև արքունի վար-
ժարանաց մէջ ևս, ինչպէս 'ի կ'ըրջ Պ. Յովակիմ
Ռ-դունեան, նորա եղբայր Պ. Միքայէլ 'ի Սիմ-
ֆերոփոյ. դարձեալ Պ. Գարբիէլ Նապլան
տեան նոյն քաղաքին մէջ, Պ. Մեղան Նապլան
տեան յորպազար, Պ. Մարտիրոս Նապլան
տեան 'ի Թէրոփոսի, Պ. Կարապետ Թանպէ-
կեան, Պ. Խաչատուր Քարամիրզայ, Պ. Յով
հանեան Մալիեան 'ի Խարսուտ:

2 Ղրիմեցիք շատ բանի մէջ Լէհաց հետեւե-
լով, ազգային գեղեցիկ անուաններն ևս (ոչ գո-
ղէկ հետեւողութեամբ) ծափածաձ ին 50-60ն
ստեղծեն. այլ այդ սովորութիւնը կամաց կա-
մաց վերնալու վրայ և շատ գովելի բան կ'ըլլայ,
որ ազգիս ընդունելի եղած անունները կրին, և
սակէ վերջը օտար ազգաց անուններ լուայն հայ
մանչեղուն և աղէկանց, Միքայէլ գեղեցիկ կա-
նուան տեղ ամենին հարկ չկայ ըհանալով Մի-
խայ կոչուել և ոչ Գարբիէլ՝ Կավերի, շատ գե-
ղեցիկ է Վարդ-Վարդուհի անունը առ քան թէ
Ռուժա որ ըհանցեալն է Rosa անունն. Պե-
տրոսը շատ հոկիկ է քան թէ Փէթրուժքա, և
Կարապետ աւելի ընդունելի քան Գապօ, և
այլն:

կահարին դուտեր հետ: Արժանի է՝ որ
քանի մը խօսք ևս զուրցնէք այս եր-
գչին վրայ:

Երբ 1822²ն վ. Հ. Մինաս վ. Բժշկեան
խորասուի մեծաւորութեան պայտօնը
կ'ընդունի, կ'ընտրէ յերիտասարդաց
քաղցրաձայններն և հեշտալուրներն և
դաս կու տայ նոցա ազգային եկեղե-
ցական եղանակներն. սոցա կարգէն է
Պօղոս Քուշներեան, որ քան զամենը
նախադաս կ'ըլլայ և դպրապետութեան
պաշտօնը երկար տարիներ ինքը կը կա-
տարէ, ամեն մեծամեծ տօնները, հան-
դիսաւոր պատարագին սկիզբն « խոր-
հուրդ խորհին » մեծավայելուչ երգն
երգողն ինքը կ'ըլլայ: Սա՛ Պօղոս աղայ,
քաղցրաձայնութեան հետ 'ի միասին
ունի եղեր ընտիր լսողութիւն, քաղցր
մատուցը ջութակ զարնելու և բոս բա-
ւականին խազի հասկացողութիւն: Ա-
կանատեղ և ականջալուրք կը պատ-
մեն, որ երբ Պօղոս աղայ կը սկսէ խոր-
հուրդ խորհին » մեղով և անոյշ ձայնով,
կանգուն 'ի միջավայր դասուն, շուրջ
պատեալ տիրացուներով, և երբ քանի
կ'երթայ կը ճոխանայ, մերթ կը բար-
ձրանայ և մերթ մեղմ և հեգիկ կը ցա-
ծնայ, անհնարին լուութիւն կը տիրէ
տաճարին մէջ, բազմութիւն ժողովրդ-
դոց կանգնած տեղերնին անշարժ մտիկ
կ'ընեն. և ալեզարդ Բժշկեան վարդա-
պետը ծնկան վրայ եկած 'ի դասուն,
հնոյն իսրայելի Տնանողաց նման, յա-
ռալ քան զմարգարէանալ, կը պա-
տրաստուի անճառ և անհաս խորհրդոյն
սպասաւորելու: Յարդ անմուսնայի
մնացած է Պօղոսի երգոց համբաւը, և
Ղրիմու մէջ, չէ թէ միայն ազգայինը,
այլ ծեր թաթար Մրգայ մը չկայ որ
մեծաւ ախորժանօք չլիչէ քեմաւնէքի
Պօղոսին անունը:

Կը նշանուի Անդրէ, այլ ինչպէս բա-
նաստեղծ երգահան, նորա զիխոյն մէջ
աւելի մեծ տեղ գրաւած են երաժշտա-
կան խաղերն, քան թէ խօսեցելոյ և
սիրոյ զգացմունք, աւելի գաղափարաց՝
իդէայից աշխարհին հետ է, քան նիւ-
թական աշխարհիս վրայ. այս միջոց-

ներս հանդիպած քանի մի պատահարք ապացոյցք են գրուցածին, որ և կերպով մը երգահանիս կեանքը և բարբը կը մերձեցնեն անմահական Պետհովե-նին: Երբ Անդրէաս իր խօսեցելոյն տե-սութեան կ'երթայ, աւելցնելու է՝ վե-րացեալ մտքը, փոխան հարսնացուին դուռէն մտնալու, դրացեաց տունը կը մտնայ, և այնպէս զբաղեալ որ մինչև ներս՝ սենեակներն կը մտնայ, և ժա-մանակ անցնելէն վերջը, սխալման թո-ղութիւն ուզելով դուրս կ'ելնայ:

Անդրէ արտաքին ձևովն՝ բաղդ ու-նեցած է, աշխարհիս շատ մեծահան-ճար մարդկանց նման, տկար, փոքրիկ մարմնով մէջ, մեծ և զօրաւոր ոգի ամ-փոփել: Կարճ էր հասակաւ, նիհար և վտիտ մարմնով, սպիտակամորթ, աչ-քերը մեծ և սև, ճակատը կունտ ու դուրս ցցուած: Հին Ղրիմեցոց տարա-զը բոլորովին ձգած և ըստ ամենայնի եւրոպականացեալ. կուրծք և օձիք, շապկաթեք միշտ ձիւնի նման սպի-տակ, վերնազգեստն, բաճկոն, և այլն, վերջին ձևոց համեմատ, ձեռքը գաւա-զան, զուխը զլանած և զխարկ:

Կը կարգուի Անդրէ 1846 դեկտ. 1. կ'ունենայ զաւակներ ըստ ժամանա-կին. նորա հեղութիւնն և առաքինու-թիւնը կը վարձատրեն երկինք, տալով նոյն բարեպաշտիկ, համեստ և քան զինքն աւելի հեզ և բարեբարոյ ամուսին. այլ Անդրէի ամեն կամքը և ակնարկու-թիւնը՝ օրէնք որբսդան կ'ըլլան կնոյր համար. չէ թէ միայն ծնգասէր ամուսին, այլ և սիրող և յարգող էրկան ազգակա-նաց և առմնաքնեւորուն. նորա բեր-նէն ոչ ոք լսած ծանր խօսք և ոչ բար-ձր անպարկեշտ ծիծաղ: Եթէ Ան-դրէի այսպիսի մէկ հեզաբարոյ կին մը չպատահէր, անշուշտ նա ժամանակէն առաջ աշխարհը կը փոխէր. դժար բան է առաքինի և հեզ մարդուն, լեզուանի և յամառ կնոյ հետ կեանք վարել: Եր-ջանիկ էր Անդրէ իր ընտանեկան կե-նաց մէջ, երջանկագոյն ևս եղանակաց աշխարհին մէջ. ըստ աշխարհի օրինի իրեն բան չէր պակասեր. չափաւոր ապ-

րուստ, խաղաղաւէտ կեանք: Անշուշտ նորա կենաց նպատակը պէտք էր որ ըլլար, ընտանեաց բարօրութիւնը և նիւթական ապահովութիւնը. քանի որ կենդանի էր, այդ, միշտ հոգած և խը-նամոտ ամուսին և հայր եղած է. և ինքն առատ և չէն օրեր անցուցած. այլ որովհետև ինչպէս բանաստեղծ և իդէա-կան անձն, չէր կրնար տալ մամու-նային այն նշանակութիւնը, ինչ որ կու-տան այժմ ժամանակիս տնտեսագէտք, Անդրէի ընտանիքը, կենաց վերջին տա-րիները, մանաւանդ մահուանէն վերջը, խեղճ մնացած են. այլ մենք չփութանք նորա տխուր վախճանը յիշելու, մինչ-դեռ ունի նա յիշատակաց արժանի այլ գործեր:

Կամաց կամաց խարասու նեղ կու-գայ Անդրէի. նորա հանճարն և գոր-ծունեայ կեանքը, աւելի լայն ասպա-րէզ կը փնտռեն. ուստի հրաժարական մը առ հայրենիս տպուած կը թողու, ուրիշ այլ շատ յիշատակաց հետ, գաղ-ղիարէն խորագրով՝ Չու¹, հաճոյք խարասու—բազարի. և ինքն ընտանեզք կը չուէ կ'երթայ 'ի Սևաստոփոլ, որ (1852) Ա. Արեւելեան պատերազմէն առաջ, Տաւրիոյ ամէնէն չէն և բազ-մամարդ քաղաքն է: Գիտունը երաժըշ-տութեան արուեստին կը վկայեն որ այդ Չուն, նորա երկասիրութեանց մէջ, որ մեծաւ մատամբ անտիպ մնացած են, ընտրելագոյններէն մէկն է և հաւաստի նշան բնածին հանճարոյն:

Շուտով կ'ընտանենայ Անդրէ Սևաս-տոփոլի աղնուականաց հետ. կը բա-ցուին նորա զիմար մեծամեծաց զրու-նէրն, կ'ընտրուի դասատու երաժշտաց օրիորդաց. այդ միջոց ժամանակին, որ կը տեէ 1852—1854, մինչև ցհրատա-րակումն պատերազմին Ռուսաց ընդ-

¹ Marche, plaisir de Karassoubasar, par M. André Golodoff. Անդրէ հայրենակցաց ոչ գովելի սովորութեամբ փոխած կոմ թարգմա-նած է հոս իր մականունը. վասն զի ГОЛОДЪ ուսու-բառ է, կը նշանակէ քաղց և աւել գեղեցիկ էտի ազգային վերջաւորութեան տեղ ուսու ոչ մաս-նիկը առած է:

դէմ գահնուորեալ Պետութեանց, վարժապետին կենաց զորոճանայ և երջանկագոյն միջոցն է. թէպէտ և աշխատութիւնը մեծ և անդադար, այլ առատ կը քաղէ երկար տարիներու անընդհատ վաստակոց պտուղը: Ձեռքէ ձեռք կը քալէ Մոսիւէ Անդրէ. ամեն մեծամեծաց սիրելի, ամենէն ճանչցուած վարժապետ գեղեցիկ արուեստին երաժշտութեան. երգ, երաժշտութիւն, պարահանդէս, ցայգահանդէս, զօրահանդէս առանց Անդրէի չեն ըլլար: Նախիմով ծովակալը զԱնդրէ կ'ընտրէ, նաւաստի երաժշտաց պարուն դասապետ: Անդրէ թէպէտ նկուն մարմնով, կարճ հասակաւ, մանաւանդ այն հազարաւորաց մէջէն՝ ընտրուած, բարձրահասակ և գեղանի հիւսիսային երիտասարդաց դասուն առջև, այլ գիտութեամբ և հանճարով նա բարձր, և այնպէս ճանչցուած և ընդունուած է ամենքէն:

Հայ սիրտ մը չկրնար առանց հրեւոտանաց յիշել կամ երևակայել Անդրէի դիրքն Սևաստոփոլի մէջ, և խաղացած դերը. Սևաստոփոլ իրեն ընական դրութիւն, ուր ծով՝ ծովու մէջ է և քաղաք քաղաքի վրայ. տէրութեան անբաւ գանձն, որ քաղաքին ստորերկրեայ և վերամբարձ ամրոյններուն համար ծախուած է, իւր հազարաւոր զինուորներով և սպաներով, մարտիկ մեծամեծ նաւերով և թնդանօթներով, քաղաքին մէջ մտնողին վրայ ահ և երկիւղ կ'ազդէ. անմերձեանքի և սոսմատչելի հակադրուած է թշնամաց համար. միով բանիւ ամեն կողմ ծածանեալ դրօշներն, իրենց վրայի երկզվեսեան սև արծիւներով, կործանումն կը սպառնան մերձենալ իշխողին. զօրք և զօրաւարք քաղաքին ամրութեան և իրենց քաղութեան վրայ վստահացած սիգապանծ կը ճնմեն Սևաստոփոլի մէջ. ահա այդպիսի քաղաքի մը մէջ, այդպէս ինքնապանծ զօրականաց զինաց կանգնած նկունն Անդրէ, մէկ ակնարկութեամբ կամ մոգական գաւազանին փոքրիկ շարժմամբ կ'ոգևորէ զարի զօրա-

կանները, ահաւոր կը գոչեն շնիւրայք, տախիք և քնարք, որոց ձայնին հըռ հպատակութեամբ արձագանգներ կու տան յոխորան Մալաքովի բարձունք և հանդիպակաց Հիւսիսային ափունք Саверка, ուր այժմ գերեզմանք են տասն բիւրուց, անկեղծն 'ի պատերազմին. ուր անշուշտ սև հողուն տակ ծածկուած են և շատք յաշակերտաց Անդրէի: Քանի սիրելի կ'ըլլայ Անդրէի յիշատակը հայասէր սրտերու, երբ մտածեն, որ Անդրէ իր տոկուն և յամառ աշխատասիրութեամբ բացած է իւր ասպարէզը և հասած այս կէտին, յորում կը դիտենք զնա: Մնչուշտ է և այս, որ եթէ մեր հայ երիտասարդութիւնը, չըսեմ ամենքը, այլ շատերը 'ի նոյանէ, եթէ իրենց աստուածատուր տաղանդը մշակէին, և անգործութեան և նորա չար հետեանաց չտային դիրենք, դեռ որչափ Անդրէի նման պիտանի անձինք կ'ունենար ազգեր. նիս, որոց այժմ մասնաւորապէս պէտքը կը զգայ Ս.Ս. Խոնարհիլ ևս կարևոր է այն արդիւնաշատ և բազմերախտ իր ժըշկեան վարդապետին դիմաց, որ իւր բազմատեսակ ժողովրդական, եկեղեցական և գրաւոր վաստակոց մէջ, կրցեր է հոգ տանիլ մատաղ և աշխարհքէ բոլորովին անծանօթ սրտերու վրայ, սերմանելով նոցա մէջ աշխատասիրութեան և ինքնակրթութեան սերմանիք, որով ժամանակին մանկանց մէջէն ելած են, ոչ պակաս քան զԱնդրէ, գործունեայ և պիտանի անձինք:

Երբ 'ի 1854 պատերազմ կը հրատարակուի, խոհեմութիւն կը սեպէ Անդրէ հեռացնել ընտանիքը 'ի Սևաստոփոլէ: Արդէն Ռուսաց նաւատորմի ղեկավարն 'ի նաւարանէն Սևաստոփոլի առաջնորդութեամբ Նախիմով ծովակալին, պաշտպանին Անդրէի վարժապետին սիրտը կոտրած էր. անստոյգ ելք պատերազմին, քաղաքին վտանգաւոր վիճակը, օր ըստ օրէ պարպուիլը, անմատչելոյն մատչելի 'ի ևս և կործանելի ըլլալը, շատ կը տաքնապէին նորա սիրտը. և ահա յանկարծ

լուր կը հնչէ 'ի Սեաստոփոլ, այն տաղ-
նապոդական միջոցին, որ Նախիմով ծռ-
վակալը Սինոպի նաւահանգստին մէջ,
զարկեր՝ ցրուեր տաճիկ նաւատորմը և
յաղթանակաւ կը դառնայ 'ի Սեաստո-
փոլ: Անդրէի տազնապեալ երևակայու-
թիւնը աշխուժեալ կը կըցոլայ, կը հնչեն
ականջաց մէջ իւր աշակերտաց Կրօ,
Կրօ գոչումն և աղաղակ, և ահա նոյն
ճգնաժամուն և ինքն կը գոչէ Կրօ և
նոյնը կը կէտագրէ խաղի թղթի մը
վրայ. ահա այդ տազնապոդ և ցրուն ե-
րևակայութեան արտադրութիւնն է
Կրօ! Синопскій Маршъ Ռուս, Չուն 'ի
Սինոպ, կը փութայ Անդրէ կը սորվեցնէ
կէտագրածը 'ի Սեաստոփոլ գտնուող
երաժշտաց, և ծովակալը յաղթանակաւ
նաւահանգիստը մանեւ ժամանակ,
կը զիմաւորէ զնա դասապետ կանգնած
երաժշտաց. բազում շնորհակալու-
թեամբ կ'ընդունի Նախիմով Անտրէի
երախտագէտ սրտին արգասիքը, կու-
տայ վարժապետին նոյն վայրկեանին
200 ռպ. խազը կը դրկէ 'ի Բեդր-
պուրկ, շուտով կը վիմադրուի, մէկ
օրուան մէջ հազարաւոր օրինակը կը
ծախուին. մայրաքաղաքին մէջ ամեն
տուն գոհութեամբ և գովութեամբ կը
զարնեն և կը լսեն հայ երգահանին՝
Քաղցածեան Անդրէաս վարժապետին՝
մտաց ծնունդը: Այնատեսք կը պառ-
մեն, որ ամեն անգամ երբ մեր Հայոց
տներուն մէջ դաշնամուրի վրայ կը զար-
նեն այդ եղանակը, սաստիկ կ'ողբեր
եղեր Անդրէ, և ձեռքով նշան կու տայ,
որ լուսթիւն ըլլայ, որպէս զի որոշակի
հնչուի թնդանօթից որոտումը, ալեաց
շառաչը, նաւուց ճարճախիւնը և քա-
ղաքին շանց հաչիւր: Այս երաժշտական
խազը Անդրէի գլուխ գործոցը կը հա-
մարին հմուտք արուեստին:

Սեաստոփոլի վիճակը երբ կը սկսի
բոլորովին վատնալ, Անդրէ ընտա-
նեացը քով կու գայ 'ի Սիմֆերոփոլ.
հօն ևս կ'ունենայ շատ դասեր, այլ ոչ
Սեաստոփոլի առատ վարձատրութիւնը
և ոչ փառաւորութիւնը. թէպէտ սը-
պած խազը առձեռն բաւական գումար

մի կ'ընձեռէ իրեն, այլ այն մի անգամ
միայն և ոչ անընդհատ: Կ'աշխատի
վարժապետը քիչով գոհանալ, և պա-
րայ միջոց գտնալով խարասու կու
գայ. հօն անակընկալ դէպք մը արժա-
նապէս կը փառաւորէ զԱնդրէ, հայ-
րենակցաց դիմաց, որով նոքա յայտնի
կը տեսնան իրենց քաղաքակցին մեծ և
կարող մարդ ըլլալն, և Անդրէի ճնշեալ
սիրտը վերջին անգամ կը փառաւորի
և կը զուարթանայ:

Սեաստոփոլի եռամեայ անընդհատ
ռմակոծութիւնը, շատ մայրեր լա-
ցուց, և շատ ևս ամուսինք անդարձ
բաժնեց 'ի սիրելեաց. շատ զինուորաց
վաչտեր և ջոկատներ 'ի հարաւոյ և 'ի
միջին Ռուսիոյ մտան 'ի Սեաստոփոլ
և այլ չդարձան. կարգը եկած էր հիւ-
սիսային ազատ և ուտանիկ ջոկատե-
րուն. հասած էին, այս միջոց, 'ի խա-
րասու վիշապազուն և հունգարացի հե-
ծեալ վաչտերը, Драгуны և Гусары
ուր հանգիստ առնելով քանի մ'օր
անցընէին՝ երթային պիտի 'ի Սեաստո-
փոլ: Շատ խարասուցի մարք տեսնա-
լով այդ կայտառ երիտասարդութիւնը,
որ յայտնի մեռնելու կ'երթային, ար-
ցունք թափեցին, և այլ շատ սրտեր
գաղտնի տրոփեցին: Այս վաչտերուն
սպոյթ և մեծաւորք լսելով որ Սինո-
պեան չուոյն հեղինակի հօն է, կը փըն-
տուեն և կը գանան զինքը, և կը խըն-
դրեն որ յանձն առնու երկրորդ օրուան
ըլլալու զօրահանդիսին միջոց պարա-
դլուխ կենալ երաժշտաց դասուն և
կառավարէ ինչպէս որ գիտէ: Տեսնա-
լու բան էր յիրաւի, նոյն օրուան հան-
դէսը. քաղաքին արևելեան կողմի ընդ-
արձակ դաշտը, ուր ձմերոցք են զօրաց,
ծածկուած էր հազարաւոր հեծեալ
և հետեակ զօրաց յոկատներով դրօշ-
ներ փողփողեալ, սպայք և զօրավարք
մեծամեծ և զարդարուած ձիերու վրայ
նստած, վեր վար ասդին անդին ար-
շաւելով. և մինչ պար երաժշտաց պի-
տի ոգևորէ զզօրս և զձիս 'ի կեղծ պա-
տերապմ (manoeuvre), ամենեցուն ծա-
նօթ փոքրիկ Անդրէաս վարժապետը՝ ե.

րաժշտաց խմբին առջև կանգնած , ձեռքը դաւազանիկ մը բռնած , ճկուն և ճարտար շարժուածքով , սուր և կրակոտ նայուածքով ոգի կու տայ եղանակաց . ահեղ կը հնչեն շփորայք , կ'ողևորին ամենքը , կը տրոփեն ձիւք , հըր-անօթք կը ճայթեն , մութն և հող երկինք կը դիզուին . այլ խորասուշուոյ շատին աչքը Անդրէի վրայ է . ոչ մէկ՝ այլ շատ բացազանչութիւնք կը լսուին նոցա բերնէն . « Համէ նայիս նէ , իտա մեր Անտրիասին , նայիս նէ մէ մը իտրուր կ'ուրբառածին » : Այլ այդ վերջինն էր Անդրէի փառաւորութեան . առաջին և վերջին անգամ , այս առթիւ , ցոլց Անդրէ իրեն հայրենակցաց շատ տա-րիներու աշխատութեամբ ձեռք բե-րած արհեստին փայլքը : Դարձաւ ըն-տանեացը քով 'ի Սիմֆերոփոյ . այլ ասկէ վերջը երթալով ձախողեցաւ վար-ժապետին վիճակը . պատրաստ դրամը հատնելու վրայ էր , դասերը դադրե-ցան . Սիմֆերոփոյէք ևս , այսօր վազը , թէնամույ կը սպասէին . փոխան դաշ-ամուրի ձայներու՝ հեռուէն Սևաստո-փոլի ռմբակոծութեան բոմբիւնները կը լսուէր . Սևաստոփոլ , Անդրէի երկրորդ հայրենիքն , սրոյ և հրոյ ճարակ ըլլալով , աւերակաց կոյտ մը դարձաւ , նորա բարեկամը և առատ վարձատրողը ծա-ծկուեցան աւերակաց տակ : Արիւնոտ պատերազմին անողորելի հետեանք մահ և ցաւք՝ մանաւանդ վարցաւքը (typhus) , սկսաւ ճարակիլ Սիմֆե-րոփոլի մէջ ևս . բռնուեցաւ և մեր վարժապետը . նոյն միջոցները վախճա-նած էր Հայոց-Կաթողիկէայց Տէր Կիրեղ Պէնկերան վարդապետը . Անդրէ թէպէտ չէր ծեր հասակաւ , այլ մահը իրեն ահաւոր չերկցաւ , և ինչպէս որ պիտոյեր էր խնդրել . քրիստոնէաբար ապրիլ , փափաքեցաւ նոյնպէս ևս մեռ-նիլ . գիր դրիւ տուաւ որ խարասու գը-տնուող քահանաներէն մէկը գայ և պաշ-տէ իրեն վերջին Ս . Խորհուրդքը : Ձինքը խոստովանցնող քահանայն վկայած է , որ շատ տարիներով խոստովանահայ-րութեան պաշտօն վարելով , առաջին

անգամ այսպէս ճշմարիտ և կենդանի հաւատքով քրիստոնէի մահ տեսած է : Կը խոստովանի մեծաւ զղմամբ , մեծափափագ կ'ընդունի Ս . Պաշարը , և լի հաւատքով կը փաշէ աչքերը , որ բանայ լաւագոյն աշխարհին մէջ : Կ'ող-բան զնա ընտանիք , կ'ողբան սրբելիք , այլ սրբա աւելի իրենց թե թիկուն-քը կ'որսնցնեն ինուն վրայ . այլ ոչ մի կաթիլ արցունք կը թափի հայ երգա-հանին մահուան վրայ . չկար հայ մի որ հասկցած ըլլար ազգիս կորուստը Ան-դրէի մահուամբ : Երրորդ օրը եկաւ թաղման հանդէսը , բոլոր Սիմֆերոփո-ցի ազգայինք զնացին ուղարկաւոր գա-ղաղին ետեւէն , զոր կը կրէին հոյ երի-տասարդք . եղան հանգստեան պա-տարադներ , հանգչեցաւ սև հողուն ծոցը Անդրէի ժամանակէ առաջ ծերա-ցած մարմինը . 46 տարուան էր երբ վախճանեցաւ . ոչ շիրմք և ոչ մահար-ձանք ծանրացան վրան , և ոչ իսկ խաչ-քար մը՝ որ յայտնէ ապագային ազնիւ և աւաքինի հայ երգահանին ոսկերաց հանգստարանը , վրայէն սահելով ան-ցնելով 25 տարի՝ գերեզմանին տեղն ևս անյայտացաւ . . .

Մինչդեռ գեղեցիկ յոյսերով հայու-թիւնը ապագայի մը կը սպասէ , որ նորոգէ անցեալը և իրեն դարևոր փո-չեաց տակ ծածկուած եռանդը արժա-ծէ , պատշաճ համարեցանք՝ ասկէ քա-ռորդ դար առաջ մեռած գնացած հայ հանճարոյն յիշատակը նորոգելով հա-ղորդիլ ազգայնոց , որ աշխարհիս մէկ անկիւնը , խիստ քիչ առնն , վաղան-ցուկ ասուպի նման փայլած և շուտով 'ի մարը մտած է , թողլով իբրև հետք երկու կտոր տպուած խազերն , քաղ-ցրիկ յիշատակ հայ հանճարոյ :

Թողլով մասնաւոր քննութիւնք գիտ-նոց արուեստին , այս միայն կը զրու-ցեմք , որ Անդրէաս վարժապետ Բաղ-ցածեան , յարատև և անխոնջ աշխա-տութեամբ ծառայելով գեղեցիկ դը-պրութեան և արուեստից , նոր ճամբով մը առաջ գնացած է , որ մինչև այն առնն անծանօթ էր իւր հայրենակցաց

Հայերէն գրաբառն ևս լաւ սորված է, որոյ վկայ են գրած նամակներն. ուստի սերէն քաջ և յափառորապէս գաղղիարէն. իսկ երաժշտութեան մէջ այնչափ առաջ գնացած, որ ինչպէս իրմէ առաջ, նոյն իրմէ ետեւ, մինչև ցայսօր, հաւասարող մի ելած չէ Տաւրիոյ մէջ, որով ամենայն իրաւամբ կը ճանչնամք

վարժապետ Երաժշտութեան ՂԱՆ, որէնաւ փաղցածեան:

Հ. ՔԵՐ. Վ. ՔԱՆԵՆԵՐԵԱՆ

1 Հետեւեալ Պարկին մէջ կը տպենք եւրոպական երաժշտութեան նշանագրող մեքենով վարժապետս կրկին երկատիրութիւնքը, Զու, հաճոյք խաբարս— Բաղարի և Զու 'ի Սինդո:

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ԱՌԱՄԻՔ ԱԶԳԱՅԻՆՔ

Ով որ կ'ուզէ և հարկագրեալ է հիմակուան Հայոց ազգին այլ և այլ կողմանց աշխարհաբառ կամ աւամական լեզուն քննելու ժամանակ անցունել և տեղեկանալ անոնց հոգին՝ ընտելութիւնը և կերպը, այս հայկական առածները ու հաւաքումը կարգայ, որ կարծ խօսքով և մէկ առածով այլաբանական բնութաբանութիւնը, իր միտքը կը յայտնէ դիմացիներն, որով կամ կը խրատէ, կամ կը համոզէ և կամ կը յանդիմանէ, և իր դիտաւորութիւնը և բնութեւնը կ'աւարտէ: Իսկ գործածութեան համար՝ խօսքին յարմար տեղն որ դա՛յ ըսելու է, ըստ պատշաճի անձանց և պարագային:

Այս առածները ես ինքս անձամբ շատ տարի ժողովրդէր էի, այլ և յայլոց ժողովածներէն՝ որոնք չունէի՝ առի. ինչպէս Ճէլալեան Հ. Անանի վարդապետէն, Մ. Մ. Միանասրեանէն, Խաչատուր Աբովեանէն, Խոսեանցէն, և յայլոց, ըստ խօսից Երևանցոց և կամ Տփլիսեցոց, Վանեցոց, Անեցոց գաղթականաց, Աղաչկերտցոց, Պաշաղովցոց և Զուլայեցոց, տեղ տեղ ալ բացատրելով մէկ քանի անյայտ խօսք կամ բառ և մէկ գրով յայտնելով թէ որ տեղացի ոճն է: Գիտեմ՝ դեռ շատ առածներ կան գործածուած զանազան գաւառներ, որ չեն գրուած հոս. անոնք ալ ժամանակին կը ժողովուին ու կը միանան ասոնց հետ:

Ուր որ չէ նշանակուած թէ որ գաւառին ոճն է, բնէ է որ Կ. Պոլսոյ և Տաճկաստանի սովորական ոճն է. իսկ ուր գրուած չէն այս համառօտագրութիւնները, կ'իմացուին:

Ե. Երևանցոց, կամ Տփլիսեցոց և կամ Պարսկահայոց:

Պ. Պաշաղովցոց և կամ Անեցոց գաղթականաց՝ ի Իրանի վանքեր:

Կ. Կարնեցոց:

Խ. Խորհրդոց գաղթականացն յԱնադ:

Ա. Աղաչկերտցոց:

Վ. Վանեցոց:

Զ. Զուլայեցոց:

Հ. Միտք Վ. ՃՈՒԱՐԵԱՆ

ԵՐԱԿԱՔԱԿ ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՅՅԱՐԱՋԳԻ ՄԱՏԵԱՆՔԱՅ

ԲԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՅՈՅ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԻ. — ԳԵՐԹՈՒԱԾՔ

Փանդի կարեւոր պէտք են համարեալ և յուսումն գրադիտութեան վարժիչ սիրողաց՝ ընդհանրապէս ընդ հանձարեղ և չքանալ գրութիւնս բանասիրեց և բաղմազան քերթութեանց, որովք ճիշտացեալ են մատենագրութիւնը ազգաց հնոց և արդեաց, ծաղկաբաղ առնելով՝ ի նոցուն տամք՝ ի լոյս զառաջիկայս, ուշ եղեալ կրկին և նորանոր իննամովք զպատրաստեալն՝ ի բազում ամաց հետէ գրեալ թովանդակապէս նորոճող յօրինել:

Եւ արդ նախընտիր արարեալ եղաք ի սմա փոքր ի շատ հատուածս զանազան ոճոյ և տեսակի բանաստեղծականին, քաղեալ մանաւանդ բազում ինչ յիմաստալից քերթութեանցի Հումերի, Վիրգիլեայ, Սոփոկլի, Ռատինի, Միլտոնի, Ալփիերեայ և այլոց, որոց պատշէտ թարգմանութիւնը արդիւնք են քաջ և ճարտար գրչւոց նորոյս Թարգմանութեանցի և Կերպ. Սրբար. դա՛յ Հիւրմիւշ, գերագոյն վարժապետաց յաւուրս մեր արուեստի տաղաշափութեանց, և ճշգրիտ և հայկաբան թարգմանութեանց:

Առ այսոքեւք ծանուցանեմք զի և զհամառօտաբոյնն սորին խորհեցաք առանձինն ընծայել ի լոյս յառանձին՝ ի գիրութիւն նախական վարժողաց, ստուար յոյժ համարեալ վասն նոցա զառաջիկայս:

Իցիւ յերթերցումն ասցին սիրովառեալ սիրողներս զինչպիսի պատանեաց, արծարծեցին և միտք իւրեանց ի խանդ ստոյգ գեղեցկին, ըստ օրինակի Արմատեայ զարգացելոց, ի վեմադոյնն միշտ նկրտելով և ի շքամբիտ բարգաւառանս, նահանջեալք ի նկնխտիս և ի ստորաքաղը ընթերցմանց: